

ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Երջանիկ է այն քաղաքը, որուն բնակիչները ժրջան են ու կը վայելեն իրենց աշխատանքի վարձքը՝ ձեռք բերած են միայն ապրելու անհրաժեշտ բաները եւ կը փախչին աւելորդէն ու գուարճութիւններէն, կայքն ու կարասին, հագուստն ու տունը, կերակուրն ու ըմպելիները համեստ են ու չափաւոր: Այնտեղ կարելի է տեսնել քաղաքացիներու միջեւ խաղաղութիւն եւ ընտանիքներու միաբանութիւն, կեղծաւորներու հանդէպ ատելութիւն, բարեսիրտներու հանդէպ սէր եւ ուրախ կեանք:

Ով որ իր ունեցած առաջին անհրաժեշտութեան առարկաները բաւական չհամարելով խելքը կու տայ ճոխութիւններու՝ զարդ ու գուարճութեան, կը գրկուի նաեւ առաջին անհրաժեշտութեան առարկաներէն. եւ ով որ իր վիճակէն գոհ չէ, ունեցածն ալ կը կորսնցնէ եւ ապա կը փնտռէ ու չի կրնար գտնել:

Սակաւապետը հանգիստ ու անտրտունջ իր կեանքը կը վարէ, որովհետեւ կարեւոր բաները, որոնց կարիքը անշուշտ ունի, սակաւ են, եւ զանոնք դիւրաւ կը գտնէ: Չի տանջուիր սնափառութիւնը սնուցած աւելորդութիւններ ձեռք բերելու համար եւ անոնք չունենալուն, որովհետեւ անոնց կարիքը չունի: Ով որ շատ բանի կարիքը ունի, կը ջանայ ձեռք բերել զանոնք եւ երբ չի կրնար՝ կը տանջուի ու կը տրտնջայ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ

ԸՆԿԱԼՄԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Հմայողներու օգնութեան դիմելէ յետոյ, մարդոց մէջ կ'անհետանայ Աստուծոյ խօսքը ընկալելու ընդունակութիւնը: Վիւրթեմպերկցի կին մը, որ ժամանակին բուժակի դիմած է կը գրէ. «Մօտաւորապէս տարի մըն է, որ անընդհատ կ'աղօթեմ Աստուծոյ եւ կ'ուզեմ ձերբազատուիլ Սատանային շղթաներէն, բայց ապարդիւն: Շատ բան կրնամ գրել այդ մասին, բայց միայն մէկ բան կ'ուզեմ ըսել. այն օրէն՝ որ որոշեցի Աստուծոյ խօսքով ապրիլ, յաճախ գլուխս կը ցաւի: Սատանան սրբապիղծ մտածումներ կը դրկէ, որոնք կը փորձեմ ուժով վանել, բայց անօգուտ: Երբ մօրս հարցուցի, թէ ինչո՞ւ այսպիսի մտածումներ գիտ կը հետապնդեն պատասխանեց, որ մանուկ տարիքիս յաճախ գիտ բուժակի տարած է»:

ԱՌԱՅ ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցի զիտակից մարդուն հետ:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 1 ՅՈՒԼԻՍ, 2012

ԹԻՒ 27

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԼՍՏ ՄԱՏԹԷՅՈՍԻ 13.24-30

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որոմն ալ երեւցաւ:

Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուք միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա որոմը»:

Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»:

Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որոմը քաղենք»:

«Ո՛չ, - պատասխանեց տէրը, - որովհետեւ որոմը քաղած ատեն կրնայ ըլլալ որ երկուքն ալ միասին արմատախիլ ընէք: Զգեցէք որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձքի ժամանակ, ես հնձուորներուն կ'ըսեմ որ նախ որոմը քաղեն, խուրձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեն շտեմարաններուս մէջ»:

Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը:

ՕԳՏԱԳՈՐԾԷ ՍԻՐՏԴ

Եթէ «Աստուծոյ խօսքը կենդանի է» (Եբր 4.12) հապա ինչո՞ւ չի կրնար կենդանացնել իրենց հաւատքին մէջ մեռած մարդիկը: Եթէ Աստուծոյ խօսքը կրնայ մեր հոգիները փրկել (Յկ. 1.21) հապա ինչո՞ւ կորսուած մարդիկ չեն փրկուիր երբ կը լսեն զայն: Չշարունակենք եթէ-ներու շարքը: Կա՛նգ առնենք եւ մտածենք պատասխանին մասին: Աստուծոյ խօսքը լսողներուն մէջ ոմանք կ'օգտագործեն իրենց ականջները եւ ոմանք ալ իրենց սիրտերը: Սիրելի ընթերցող, ի՞նչ կ'օգտագործես երբ Աստուծոյ խօսքը կը քարոզուի. աչք ու ականջ, թէ՛ սիրտ ու հոգի: Եթէ Աստուծոյ խօսքը հասնի ականջիդ, դուն չես փոխուիր, իսկ եթէ հասնի սիրտիդ՝ կը փոխուիս:

**ԳԻՏ ՏՓՈՅ
Ս.ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ**

Ս. Աստուածածնին նուիրուած տօներու շարքին, յետագային աւելցան նաեւ իր գործածած իրերու նուիրուած տօներ, որոնցմէ մէկն է Ս. Աստուածածնի Տուփի գիւտի տօնը:

Ս. Աստուածածնի Տուփի գիւտը տեղի ունեցած է հետեւեալ ձևով: Երկու իշխաններ ուխտի կը գտնուին Երուսաղեմ. երբ անոնք կը հասնին Գալիլիա, այնտեղ կը տեսնեն հրեայ կնոջ մը տան առջեւ հաւաքուած բազմութիւն մը՝ բաղկացած ամէն տեսակի հիւանդներէ: Հետաքրքրուելով ներս կը մտնեն եւ կը տեսնեն տուփ մը: Հրեայ կնոջմէ կ'իմանան, որ տուփը ժամանակին կը պատկանէր Ս. Կոյսին: Իշխանները կ'երթան Երուսաղեմ, շինել կու տան նոյն տուփէն օրինակ մը եւ վերադառնալով կնոջ քով, իրենց տուփը կը փոխանցեն անոր եւ Ս. Կոյսին իսկական տուփը կը տանին Պոլիս եւ կը պատմեն պատահածը Պատրիարքին: Պատրիարքը մեծ հանդիսութեամբ տուփը կը զետեղէ եկեղեցւոյ մէջ եւ յատուկ օր կը նշանակէ տօնելու համար Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի տօնը:

Այս տօնը մեր եկեղեցւոյ տօնացոյցին մէջ անցուցած է Սիմէոն կաթողիկոս 1774-ին իր հրատարակած տօնացոյցին մէջ եւ կը տօնակատարուի Յունիս, Յուլիս ամիսներու միջեւ:

ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏԱՄԽԱՆ ԲԱԺԻՆ

**Ինչո՞ւ Աստուծոյ
ողորմութիւնն ու գթութիւնը
խնդրելու համար
հաւատացեալներուն
կը թելադրուի
ծոմապահութեամբ աղօթել:**

Որովհետեւ ծոմապահութիւնը խնարհութեան, հեգութեան, անձնուիրութեան եւ եսի ունայնացման արարք մըն է, գոր ենթական պէտք է գործով ցոյց տայ իր Արարիչին՝ հրաժարելով աշխարհի բոլոր ցանկութիւններէն եւ անոնց առթած հանոյքներէն ու վայելքներէն՝ արժանանալու համար Աստուծոյ սիրոյն: Ծոմ պահողը իր սրտին ամբողջական սէրը արտայայտած կ'ըլլայ Աստուծոյ հանդէպ՝ հրաժարելով իր մարմնոյն կենսական եղող հացէն ու ջուրէն: Ան իր հաւատքն ու համոզումը յայտնած կ'ըլլայ Աստուծոյ խօսքին՝ թէ «Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապայն ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

Ծոմապահութեան կամ պահքի հետ համընթաց կատարուելու են աղօթք եւ ողորմութիւն: Յոյժ թելադրելու է, որ հաւատացեալներ ծոմապահութեան կամ պահքին պատճառով ծախսերէն կրնատուած գումարները յատկացնեն աղքատներու կամ բարի նպատակներու:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ
ՆԱՄԱԿ ՓՈԽ ԳՐԱՄԻ ԵՒ
ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ**

Մեծ գգուշուշութեամբ խուսափիմք այս չար մոլութենէն, խուսափիմք գազանին սուր ժանիքներէն, խուսափիմք Սատանային մեքենայութենէն: Որովհետեւ տոկոսը չար օձին ուսուցումն է. տոկոսը սատանայական գիւտ է. տոկոսը թշնամիին սերմն է. տոկոսը տանջանքներու գրաւականն է. տոկոսը, արգելք է բարեպաշտութեան. տոկոսը գեհէնի նանապարհն է. տոկոսը կը գրկէ արքայութենէն, տոկոսը կը վրդովէ մարմինը, կը բնաջնջէ հոգին եւ կը մերժէ բոլոր արդարութիւնները: Արդ՝ խուսափեցէք Աստուծոյ դէմ մարտնչող մոլութենէն, խաւարի վարդապետէն, մարդասպան մօրմէն: Կը խնդրեմ, որ այս հիւանդութեամբ չվարակուիք: Եթէ այս մոլութեան մէջ ինկած էք, դուրս փախէք: Իսկ անոնք որ գէշ կերպով ասոր [տոկոսին] կը յանձնուին, արժանի են սուգի եւ արտասուգի. օրինակ մէկը սուրը վերցնէ եւ ինքզինք վիրաւորէ. այսպէս է այս մոլութեան չարիքը. շատերը գերի կը բռնէ, ագահ եւ կոպտաշար կը դարձնէ. չ'ամչնար ու նաեւ կատաղի կը դարձնէ. անգութ է ու նաեւ անգութ կը դարձնէ. անարդար է ու նաեւ գող կը դարձնէ. եսասէր է ու հակառակ Աստուծոյ կամքին՝ քրիստոստեաց կը դարձնէ:

(Ճանքը Յովհան Մանդակունի)

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

Ո՞Վ Է ՏԷՐ ՅԻՍՈՒՍ

Յիսուսին նայինք՝ մեր հաւատքին առաջնորդին ու կատարողինն (Եբր.12:2):

Պօղոս Առաքեալ Եբրայեցիներուն ուղղուած նամակին մէջ կը շեշտէ նայիլ Տէր Յիսուս Քրիստոսի, որպէս՝ հաւատքի առաջնորդ ու կատարող:

Տէր Յիսուսի նայելու համար, մարդ արարածը կարիքը ունի անդրադառնալու եւ գիտակցելու, թէ ո՞վ է Յիսուս իրեն համար եւ կամ ի՞նչ արժէք կը ներկայացնէ:

Այսինքն, մարդ արարածը կանչուած է պատասխանելու Տէր Յիսուսի հարցումին որ ուղղուած էր աշակերտներուն... «Ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ» (Մարկ. 8:29ա):

Շատ դիւրին պիտի ըլլայ պատասխանել վերոյիշեալ հարցումին, թէ ուրիշը ինչ կ'ըսէ Յիսուսի մասին: Միւս կողմէ, ապահով պիտի ըլլայ հետեւիլ մեծամասնութեան կարծիքին: Սակայն էականն է ունենալ անձնական, հաստատ, վստահ եւ դրական պատասխան:

Շատեր պիտի չուզեն իսանգարուիլ Տէր Յիսուսի ուսուցմունքներով եւ արժէքներով ու հետեւաբար կը ջանան հեռու պահել զինք իրենց կեանքէն եւ ապրելակերպէն:

Պետրոսի պատասխանը յստակ էր. «Դուն ես Քրիստոսը» (Մարկ. 8:29բ):

Ո՞վ է Տէր Յիսուս քեզի համար: Կրնա՞ս հաստատ հաւատքով եւ քաջաջաբար յայտարարել. «Իմ Տէրս եւ իմ Աստուածս» (Յովհ. 20:28):

Թող Տէր Յիսուս ըլլայ մեր հաւատքին Առաջնորդն ու Կատարողը: Ամէն:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
2.5-11**

Եւ արդ, ո՛վ տուն Յակոբի, եկէ՛ք Տիրոջ լոյսովը քալենք: Որովհետեւ ահա Տէրը լքեց իր ժողովուրդը, Յակոբի տունը, քանի որ անոնք փղշտացիներուն պէս իրենց երկիրը կախարդներով լեցուցին առաջուան նման, եւ օտար ամուսնութիւններով խառնածին գաւակներ ծնան:

Իրենց երկիրը ոսկիով ու արծաթով լեցուեցաւ, թիւ չունին իրենց գանձերը: Իրենց երկիրը ձիերով լեցուեցաւ, հաշիւ չունին իրենց ռազմականքերը:

Երկիրը ձեռագործ գարշելի չաստուածներով լեցուեցաւ. կ'երկրպագեն առարկաներու գորս իրենց մատներով շինեցին: Նուաստացաւ մարդ արարածը, ո՛րքան ստորնացաւ մարդը. մի՛ ներեր անոնց, Տէ՛ր:

Արդ, գացէ՛ք ժայռերու տակ ծածկուեցէ՛ք կամ ապաստանները մտէք, Տիրոջ ահարկու ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն փախչելու համար, երբ որ անիկա գայ երկիրը հարուածելու:

Որովհետեւ հիմա Տէրը իր բարձունքէն կը նայի մարդոց խեղճութեան վրայ. բայց այն օրը մարդոց ամբարտաւանութիւնը պիտի խոնարհի եւ միայն Տէրը ի՛նք պիտի բարձրանայ:
Շարունակել Աստուածաշունչէն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿ
ՅՈՍԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
9.30- -10.4**

Հեթանոսները, որոնք Աստուծոյ արդարութեան չէին հետեւիր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին. մինչդեռ Իսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ գլորին «գայթակղութեան առիթ հանդիսացող քար»-ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարգարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ քար մը որ գլորումի առիթ պիտի ըլլայ, ժայռ մը՝ որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ: Բայց անոր հաւատացողը յուսախաբ պիտի չըլլայ»:

Եղբայրներ, սրտանց կը մտաբերեմ եւ կ'աղօթեմ որ Աստուած փրկէ իսրայէլացիները, որովհետեւ կրնամ իրենց մասին վկայել, թէ Աստուծոյ հանդէպ նախանձախնդիր են. միայն թէ այդ նախանձախնդրութիւնը հիմնուած չէ՛ Աստուծոյ նշմարիտ ծանօթութեան վրայ: Անոնք չհասկցան, թէ Աստուած ի՞նչ ձեռով կ'ուզէր արդարացնել մարդիկը. արդարանալու իրենց հասկցած ձեւին կառչեցան եւ ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդեռ Քրիստոսով Օրէնքը իր աւարտին հասած է եւ միայն Քրիստոսի հաւատացողը կ'արդարանայ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ՄՍՏՈՒՄՍԸ ՀՈՒՆՉԷՆ:**